ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

------ ---------- 2026 թվականի № -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի №83-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ և 22-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի հունիսի 12-ի №01/23/3960-2026 և 2026 թվականի հունիսի 18-ի №01/23/4093-2026 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի մարտի 1-ի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 19-ի №221-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №83-Ն որոշման 1-ին կետի՝

1) 3.1-ին ենթակետի «ա» պարբերությունում «յուրաքանչյուր ամսվա սակագնի» բառերից առաջ լրացնել «՝ 2026 թվականի փետրվարի 1-ից մինչև հուլիսի 31-ը ժամանակահատվածի» բառերը,
2) 3.1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա1» պարբերությամբ.

«ա1. ջերմաէլեկտրակայաններին, բացառությամբ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ունեցող էլեկտրական էներգիա արտադրող անձին, վաճառվող՝ Հաշվեկշռով նախատեսված էլեկտրական էներգիայի առաքման համար անհրաժեշտ բնական գազի և էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ունեցող էլեկտրական էներգիա արտադրող անձի կողմից

առաքվող բնական գազի քանակների տարբերությամբ ձևավորվող բնական գազի՝ 2026 օգոստոսի 1-ից սկսած յուրաքանչյուր ամսվա սակագնի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$P_{Ջ1}=91.15*E»:$$

2. Ընդունել ի գիտություն, որ գազամատակարարման համակարգում 2026 թվականի օգոստոսի 1-ից ուժի մեջ մտնող կարգավորվող սակագների հաշվարկում ներառված՝ միջին ամսական աշխատավարձի աճով պայմանավորված աշխատանքի վճարման ծախսերի ավելացումն ուղղվում է գազամատակարարման համակարգի՝ լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված աշխատողների, բացառությամբ բարձրաստիճան ղեկավար անձնակազմի, պարգևատրման ֆոնդին, որը Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն ներկրվող բնական գազի գնի հնարավոր բարձրացման դեպքում կարող է նվազեցվել գազամատակարարման համակարգում կարգավորվող սակագների հաշվարկներից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի օգոստոսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
---- ---------- 2026թ.